Ցայնժամ այո՛ ուսումնարանք Հայկեանս մանկտեաց ժլրաջան,
Յառաջաքայլ 'ի գիտութեան շրջելոցսցին աննրման.
Եւ հայրենիք մեր արդարև որով անշուշտ ունիցին,
Փառազարդիլ 'ի կեանս ուրախ և կալ յաւէտ 'ի նրմին.

Գ. Ի՛Ր՝ Ո-Ր-Ր-ԻԼ Մ-ԴՐԷ-Ի-Ն

ԱԶԳԱՑԻՆ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ ՀՐԿԻԶԵԱԼ ԴԺՐԱՂԴ ԱԶԳԱՑՆՈՅ ՄԵՐՈՅ Ի ՊԵՐԱ Կ. ՊՕԼՍՈՅ.

Մայիս 24-ին 'ի Ռերա Կ. Պօլսոյ պատահած աղետալի և սոսկալի հրկիզութեան անցքը մեր Ազգայնոց բազմաց յայտնի՛ է։ Ինոյն հրդեհին ինչպէս ուրիշ ազգեր, նոյնպէս՝ մանաւանդ ըստ մեծի մասին մեր դժբաղդ և ցաւալի Ազգայինք ոչ միայն իւրեանց բնակարաններէն և տնային կահ ու կարասիներէն և ինչքերէն զրկուեցան, այլ որ առաւել ողբալին է՝ ոչ սակաւ անձինք զրկուեցան՝ ոմանք 'ի ծնողաց, ոմանք յորդւոց, ոմանք յեղբարց և 'ի քերց, ոմանք ևս կորուսին իւրեանց ամուսինները, մերձաւոր ազգականքը կամ բարեբարքը բոցերու մէջ հրոյ ճարակ և փլատակներու ներքև, և կամ այլ զանազան աղետալի եղանակօք։ Այսօր ամենքը գրեթէ՝ 'ի վերայ մոխրոց նստեալ, թափուր և զուրկ իւրեանց բնակարաններէն՝ ինչքերէն՝ նա մանաւանդ որ առաւել աղետալին և ողբալին է՝ իւրեանց սիրելիներէն, ո՜հ սրտաշարժ և միանգամայն ողորմելի վիճակաց ենթարկուած են։ Յորոց բաղումք սրտից կսկիծներէն՝ արդարև մահը կը բաղձան քան զկեանս՝ իւրեանց ներկայ դժբաղդ և բազմաղետ վիճակը և անցքը չը տեսանելոյ համար. և ոմանք 'ի դառնութեան բացօթեայ վրանաբնակ լինելոյն և յայլոց ցաւալի պատճառաց զմահ կը ճաշակեն։

Վ. Հ. Կաթողիկոսը այսպէս վտանգուած և փնտռուած իւր սիրելի հոգևոր որդւոց աղետից աշխարհագոյժ համբաւը ստանալուն պէս, որդեսէր սիրտը՝ աղեխորով մորմոքուած հարաւ յարտասուս. և Աստուածային կամքը օրհնելէն զկնի, անդէն անդ մտադրեցաւ ըստ իւրումն հայրական սիրոյն բերման և ըստ սրբազան պարտուց պաշտամանն՝ դիմել դրամական օժանդակութեան Ռուսաստանաբնակ սիրելի որդւոց իւրոց։ Ուստի կարևոր լուծումը Այսերական Կառավարութենէ փութով ստացած՝ յատկապէս Կոնդակներ ուղղեց ամենայն Առաջնորդաց և Առաջնորդական-Փոխանորդաց ժապաւինեալ տումարներ պատրաստել և ստորագրութիւն բանալ ամեն քաղաքաց և գիւղօրէից մէջ. և ամեն կարգի և աստիճանի ժողովուրդքն ևս Օրհնութեան Կոնդակաւ հրաւիրեց ձեռն օգնականութեան և նպաստից կարկառել իւրեանց համարիւն և համասեռ դժբաղդ եղբարց և ազգայնոց։

Արդ՝ ո՞ր անձն, ո՞ր ազգասէր սիրտ կարող է անտարբեր մնալ և խնայել իւր դրամական օգնութիւն այն Ռերաբնակ եղ-

բարց, որոց բաղումք արդէն քանիցս իւրեանց ունեցածները հրդեհից զոհ տալով, այս անդամ իւրեանց սիրելիները և ընտանիքները և բարեկամները ևս կորուսին. ամէն ՝ այ իւր աչքին առջև ներկայացնէ՝ այն ազետալի տեսարանը, ու տեսնայ որ իւր համազգի եղբարց ոմանք բոցակիզուած, ոմանք կազախառն՝ թանձրամած և բոցաբորբոք ծուխէն հեղձամղձուկ, ոմանք փլատակաց ներքև և ջրշեղ ջի ջրոց մէջ թաղուած վախճանեցան։ Եւ որք կենդանի մնացին, մերկ և կողոպուտ յամենայնէ նստեալ 'ի վերայ մոխրոց՝ և անբմբերելի արտասուաց և դառն ողբոց մէջ ընկղմած, ո՜հ՝ մի՞թէ մարդկային սրբտերը կը հանդուրժեն և անտարբեր կարեն մնալ այսպիսի՝ ցաւալի և բազմաղետ վրտանգելոց վիճակաց. յիշե՛նք՝ զի հրկիզելոց մեծ մասը մեր սիրելի՝ համարիւն և համասեռ եղբարքն են։ Մինչդեռ այլազգիք անդամ մարդասիրաբար զանազան նպաստներով և միջոցներով կը ջանան մխիթարել այն դժբաղդները, մի՞թէ կարելի է յուսալ՝ զի մեր Ռուսաստանաբնակ առատասիրտ՝ բարեգութ և ողորմած եղբարք և ազգակիցք անտարբեր աչք նկատեն Վ. Հ. Կաթողիկոսի հրաւէրները իւրեանց դժբաղդ և բազմաք վտանգեալ եղբարց դրամական օժանդակութիւն շնորհելոյ աղաղաւ։ Մեք անշո՛ւշտ եմք, զի եղբարք մեր որ 'ի Ռուսիա և ազգակիցք՝ ամենայն սիրով ընդունած 'Նորին Ս. Օծութեան հրաւէրները և յորդորները, պիտի սիրեն փութալ մի քան զմի առաւել բարի նախանձով լցեալ՝ կարեկցութեան և եղբայրսիրութեան սուրբ զգացմամբք և գեղեցիկ առաքինութեամբք վառուած՝ ըստ կարեաց օգնել և նպաստել այն Ներարնակ բազմաղետ և թշուառ ազգայնոցս. և այսպիսի՝ բարեգործութեամբք բազմաթիւ գերդաստաններ պիտի ազատուին թշուառութեան դառն կեանքերէն, և պիտի մխիթարուին նոքա ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Ի ժամանակին՝ օժանդակողաց անուանք հանդերձ քանակութեամբք նպաստիցն պիտի հրատարակուին ամսագրոյս միջոցաւ։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Ս. ԱԹՈՌՈՑՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ

Ամսոյս 7էն սկսեալ ց20ն՝ Մայր Աթոռոյս Ժառանգաւորաց ուսումնարանի աշակերտաց տարեկան հարցաքննութեան հանդէսը կատարուեցաւ 'ի ներկայութեան Գեր. Արքեպիսկոպոսաց՝ Արժ. Վարդապետաց և Միաբանից։

Ըստ բաւականին յաջող էին աշակերտաց պատասխանները դաս տուեալ զանազան առարկայից մէջ, և միանգամայն քննչաց գոհունակութեանց արժանի։

ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ՇԱՄԱԽԻ.

Գեր. Անդրէաս Արք. Եպիսկոպոս Հոգևոր – Տեսուչն Շամախւոյ՝ ըստ ուսումնասէր և բարենպաստակ զգացմանցն՝ նոյն քաղաքին Մերազնէից Օրիորդաց Վարժարանի համար ունեցած անհրաժեշտ կարօտութիւնը տեսանելով, ամէն ջանք 'ի գործ կը դնէ և ըստ բաղձանաց և ըստ բարձու հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի՝ կը յաջողի հաստատել Օրիորդաց Վարժարան։ Շամախաբնակ մերազ-